

Խոհեր հնի ու նորի մասին

«Ո՞վ է մեղավոր» հարցը մշտապես «տանջում է» մարդկության մտածող հատվածին:

Սույն հարցի պատասխանը մենք հաճախ փնտրում ենք ստեղծված իրավիճակին անմիջապես նախորդող ժամանակահատվածում: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ երկրի սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում ճգնաժամային իրավիճակների առաջացման հիմքերը դրվում են մի քանի սերունդ առաջ՝ մինչ տվյալ իրադարձության սկիզբը:

Հայ ժողովրդի ինքնատիպ բարոյական, մշակութային և հոգևոր ինքնության ոչնչացման գործընթացն ըստ էության սկսվել է դեռևս ՀՀՇ-ական գաղափարախոսության համընդհանուր ներդրամաբ՝ վերածվելով ամբողջական աշխարհայացքային դոկտրինայի, որի հիմքում ընկած էր «ամենաթողության» սկզբունքը՝ ՀՀՇ-ի վարչախմբին ու վարչակարգին մոտ կանգնած որոշակի շրջանակների համար:

ՀՀՇ-ական աշխարհայացքը՝ մեր բնակչության մի ամբողջ շերտի աշխարհընկալումն է, որի անդամները չեն պատկանում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական որևէ համայնքի: Այդ աշխարհայացքի կրողները (ներկայացուցիչները) տարբեր պատճառներով չեն մասնակցում հանրային աշխատանքի սոցիալական բաժանմանը: Տվյալ աշխարհայացքի ներկայացուցչի մոտ բարոյական գնահատականը երկրորդական է, իր համար առաջին տեղում խմբի անդամակցության (պատկանելության) որոշումն է, որին ամեն ինչ թույլատրված է, և կա «արևի տակ տեղ ունենալու» հնարավորություն: Հայաստանի անկախությունից անմիջապես հետո մեր պետության կառավարման համակարգի կադրային քաղաքականությունը առաջնորդվում և հենվում էր ղեկավարի նկատմամբ «անձնական նվիրվածության» և տվյալ կուսակցության պատկանելիության սկզբունքների վրա, ինչը ժառանգաբար փոխանցվեց նաև հաջորդող իշխանություններին:

Երիտասարդ սերունդը միայն լսելով գիտի մեր պետության մութ, ցուրտ, սովի և պատերազմի տարիների մասին, սակայն անտեղյակ է այդ ժամանակ նորանկախ պետության քաղաքական և տնտեսական բռնաճնշումների, ընտրակեղծարարությունների, կաշառակերության, համատարած կոռուպցիայի, թալանի, ժողովրդին ծայրահեղ աղքատության մեջ պահելու և ՀՀՇ-ի համար «անցանկալի մարդկանց» վերացնելու ու այլ արատավոր երևույթների մասին: Ուստի, այդ սերնդին կարելի է հեշտ ենթարկել աճպարարության և հրամցնել այն ինչ անհրաժեշտ է իշխանության ձգտող անձին կամ անձանց խմբին, ինչը շատ հանրամատչելի ձևով արվեց 2018 թվականի գարնանը:

ՀՀՇ-ի արատավոր երևույթներն իրենց կործանարար ազդեցությունը թողեցին մեր հասարակության մտածողության, բարքերի և բարոյահոգեբանական հիմքերի վրա: ՀՀՇ-ական ժամանակաշրջանից սկսած՝ հասարակության լյումպենացման նշված գործընթացն այս կամ այն ուժգնությամբ տեղի է ունենում Հայաստանի նորագույն պատմության բոլոր ժամանակներում: Հայ հասարակության լյումպենացման վառ օրինակ է նաև ներկայումս մեր երկրում ստեղծված իրավիճակը:

Մեզ թույլ կտանք, այնուամենայնիվ, մեղադրել Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, բայց ոչ թե այն հարցում, որում նրան մեղադրում են այսօրվա իշխանությունները, այլ՝ նրա կողմից իր նախագահության տարիներին թույլ տրված մի շարք բացթողումների համար. ՀՀԾ-ի աշխարհայացքը մնաց և շարունակեց ներդրվել գալիք սերունդների մեջ, նրա պարագլուխները մնացին անպատիժ, վերարտադրվեցին և մեծ ազդեցություն ունեն նույնիսկ այսօրվա իշխանությունների կադրային, արտաքին և ներքին քաղաքականությունների մշակման ու վարման գործընթացների վրա: Մեր մեղադրանքը թելադրված չէ անձնական դրդապատճառներով, այլ հիմնված է այն ծայրահեղ աղետալի իրավիճակի վրա, որում մենք հայտնվում ենք վերջին երեսուն տարվա փորձարկումների հետևանքով՝ իրականացված միայնակ հաջորդաբար փոխարինող իշխանությունների կողմից, երբ ձեռագիրը շարունակում է մնալ նույնը:

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը «Հրապարակ» օրաթերթին տված իր հարցազրույցում (հրապ. է 11.12.2019թ. համարում) հիշատակել է, որ 1998 թվականին բնակչության զգալի մասն իրենից պահանջում էր նստեցնել Տեր-Պետրոսյանին եւ ընդհանրապես՝ ՀՀԾ ամբողջ վերնախավին: Սակայն ներկայացրել է թույլ հիմնավորում, մենք կասեինք՝ փորձել է արդարացնել իր քաղաքական գործողություններն ու թույլ տված բացթողումը, որի համար նույնիսկ կամ հավանաբար զոջում է: Կարծում ենք, որ այն տեղի չունեցավ իր քաղաքական կամքի բացակայության պատճառով, ինչն էլ խորացրեց մեր ունեցած խնդիրները և հանգեցրեց նոր գլխացավանքների:

Իհարկե, հանուն օբյեկտիվության ու ճշմարտության, հարկ է նշել, որ պարոն Քոչարյանի նախագահության տարիներին զգալի և տեսանելի հաջողություններ ձեռք բերվեցին երկրի տնտեսական և սոցիալական կյանքում, արտաքին քաղաքականությունում, անհերքելի փաստ է: Նրա օրոք կանգնեցվեց պետության տնտեսության լճացման գործընթացը և դուրս բերվեց այն խորը ճգնաժամից, որում հայտնվել էր Հայաստանը: Սակայն, ՀՀ երկրորդ նախագահը քաղաքականապես «անհեռատես» գտնվեց և, հավանաբար, առաջնորդվեց «աղբը տնից չհանելու» կեղծ սկզբունքով, քաղաքական և իրավական գնահատական չտվեց «հեռացող» ՀՀԾ-ի վարչակազմի թույլ տրված ապօրինություններին, ընտրակեղծիքներին և չարաշահումներին: Բացի այդ, արդարացիորեն ապավինելով իր ժամանակ Հանրապետության զարգացման արտաքին քաղաքականության և տնտեսության մեջ ձեռք բերած հաջողություններին, երկրորդ նախագահը ներքին կադրային քաղաքականության հարցերում մնաց ՀՀԾ-ի գաղափարախոսության համակարգային արժեքների «պատանդը», ինչն այսօր աշխատում է իր դեմ՝ բառիս բուն իմաստով:

Ինչպես ընդունված է երկրի կառավարման հետ կապված ցանկացած գործողություն պետք է իրականացնել նրա և նրա ժողովրդի շահերի պաշտպանության տեսանկյունից, այլ ոչ թե ելնելով կեղծ հասկացություններից, որոնք բխում են կորպորատիվ և անձնական շահերից ու հետաքրքրությունից: Ավաղ, ՀՀ նախագահի պաշտոնը «փոխանցելով» երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին՝ ՀՀ երկրորդ նախագահը

առաջնորդվեց վերջինիս «անձնական նվիրվածության» սկզբունքով: Հավանաբար սա էր նաև պարոն Քոչարյանի թույլ տված սխալներից մեկը:

Քիչ հավանական է, որ պարոն Քոչարյանը, ունենալով սթափ, պրագմատիկ մտածողություն, արագ կողմնորոշվելու ունակություն և վերլուծական միտք, նախագահի պաշտոնը ստանձնելիս և իրացնելիս, «չնկատեց» պետական կառավարման համակարգում կլանային, կորպորատիվ և կոռուպցիոն բաղադրիչը, որ այնտեղ ճնշող մեծամասնությունը բնութագրվում էր այնպիսի որակներով, ինչպիսիք էին անսկզբունքայնությունը, գավառականությունը, կլանային շահերի առաջնահերթությունը (թայֆայականությունը), պրոֆեսիոնալիզմի բացակայությունը, ՀՀԾ-ից ժառանգություն մնացած երևույթները և այլն, թույլ տվեց, որ դրանք մնան և շարունակեն իրենց «առաքելությունը»:

Հասարակական, տնտեսական, կենցաղային և սոցիալական հարցերը լուծելու համար կլանա-ցեղային, կորպորատիվ-հայրենակցական հարաբերությունների օգտագործման համակարգը վերջնականապես ամրապնդվեց ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի օրոք: Արդյունքում, մեր երկիրը սկսեց ղեկավարել մի անձ, որը կարգավորում էր հայրենական կառավարող շրջանակների վերնախավի կորպորատիվ-կլանային բաղադրիչների բոլոր բևեռները:

ՀՀ երրորդ նախագահը կատարելապես տիրապետում էր երկրի սոցիալ-քաղաքական և տնտեսական ոլորտների ղերակատարներին մանիպուլյացիայի ենթարկելու մեթոդաբանությանն ու տեխնոլոգիային: «Խաղաղ և տաք կաբինետներում» էր որոշում պետության պետական կառավարման մարմինների ղեկավար անձանց քանակական և անվանական կազմը, դրանց կառուցվածքը, ընդհուպ մինչև տեղական ինքնակառավարման մարմիններում և համատիրություններում ղեկավարների «ընտրությունը»: Ընտրում էր նույնիսկ «անհրաժեշտ» ընդդիմադիր կուսակցություններին ու դրանց առաջնորդներին, «հնազանդ» օլիգարխներին ու «գործարար» մարդկանց, որոնք միշտ պատրաստ էին կատարելու իր (իշխանության) ցանկությունները: Ամեն ինչ կարծես թե «ճշգրտված էր», իսկ նրա՝ ՀՀ երրորդ նախագահի քաղաքական «անմահությունը»՝ հավերժ ապահովված:

Սերժ Սարգսյանը Ռոբերտ Քոչարյանից և Լևոն Տեր-Պետրոսյանից հեռուն գնաց: Նա ստեղծեց և ամրապնդեց մի իշխող կուսակցություն, որն ուներ «հսկա ութոտնուկի» տեսք: Այս կուսակցությունը երկար տարիներ կաթվածահար արեց Հայաստանի հասարակական, քաղաքական, տնտեսական և սոցիալական, ինչպես նաև ամբողջ պետական կառավարման բոլոր ճյուղերն ու ոլորտները: Միաձայնության ամրապնդման համար, իշխանության հիմնական լծակները մեկ (իր) ձեռքում կենտրոնացնելու համար երրորդ նախագահը նախաձեռնեց կառավարման կիսանախագահական ձևից անցում խորհրդարանականին, և այդ կեղծ «սահմանադրական բարեփոխումների» անվան տակ նպատակ ուներ ապահովելու իր քաղաքական «անմահությունը»: Սակայն ինչպես համաշխարհային պատմությունն է ցույց տալիս հավերժ գահակալումներ չեն լինում նույնիսկ միապետություններում: Նույն ճակատագիրը «սպառնում է» նաև մեր պետության այսօրվա իշխող կուսակցությանը և նրա գլխավոր «հերոսին»:

Փողոցային պայքարներում մեծ փորձ ունեցող և ՀՀԾ-ի «թրի տակով անցած» լրատվական դաշտի ներկայացուցիչն իր փոքրաթիվ գործընկերների հետ հայտնվեց պատգամավորական կորպուսում: ՀՀ երրորդ նախագահին Խորհրդարանում անհրաժեշտ էր այդպիսի մարդ, քանի որ նրա մասնակցությամբ, ճիշտ ժամանակին, սաստում էր այս կամ այլ՝ «հնազանդությունից դուրս եկած» պաշտոնյաներին, որոնք կարող էին «գլխացավանք» դառնալ իր համար: ՀՀ երրորդ նախագահը հաշվի չառավ, որ այդ մարդը կարող է խորամանկությամբ գերազանցել իրեն, և ճիշտ պահին խլել նախաձեռնությունն ու սկսել թելադրել իր պայմանները, չէոր նա ՀՀԾ-ի կարկառուն համախոհներից էր:

Ներկայումս այդ անձը մեր պետության ղեկը վերցրել է իր ձեռքը, նա ՀՀԾ-ական իր «ուսուցիչներին» դասը լավ յուրացրած անձ է և խորապես նվիրված ու հավատարիմ է ՀՀԾ-ական աշխարհայացքին: Նրա «օրհնությամբ» մեր պետությունում իրականացվում է «փուլային ընտրովի արդարադատություն», ընդհուպ դատարանների շենքերը գրավելու և ՀՀ բարձրագույն դատարանը՝ Սահմանադրական դատարանը, յուրացնելու իր անբռնազբոսիկ հայտարարություններով ու նախաձեռնություններով հասնում է հաջողության, քանի որ այն լսարանը, որ նա ունի, նրանց մեծ մասը չի ապրել ՀՀԾ-ի ժամանակ, իսկ մյուս մասը՝ ՀՀԾ-ի համախոհներն են: Այդ անձնավորությունն օգտվելով ՀՀ երրորդ նախագահի ստեղծած բոլոր քաղաքական, վարչական և իրավական գործիքներից, չունենալով որևէ բարոյական կարգավորիչներ, պատրաստ է, նունիսկ գիտակցաբար, «գոհասեղանին» դնել Հայաստանի, Արցախի և նրա ժողովուրդների հետագա ճակատագրերը՝ կեղծ խաղաղասիրական կոչեր հնչեցնելով: Իրեն շրջապատող պնակալեզների թեթև ձեռքով Հանրապետության նոր ղեկավարն իրեն երևակայել է Հիսուս Քրիստոսի առաքելությունն իրականացնող անձ, որին հավատացին նրա մերձավորները, թիմի անդամներն ու համախոհները, այն որևէ մեկի մոտ ահ կամ ծիծաղ չառաջացրեց:

Մեր ողբերգությունը կայանում է նրանում, որ մենք շատ արագ հավատում ենք և ֆետիշացնում այն անձին, որն իրեն հռչակում է ամենափրկիչ, իրեն համեմատում է Հիսուսի, Գանդիի և Հոմերի պապի հետ և միայն վերջում ենք հասկանում, որ հերթական խաբվածության զոհն ենք դարձել: Նույնիսկ ՀՀ չորրորդ նախագահը թե՛ սահմանադրորեն, թե՛ գործնականում ամուլ է, բավարարվում է ընդամենը օրենքներ և պաշտոններ նշանակելու հրամանագրեր ստորագրելով, հաճախակի պետության հաշվին ճամփորդելով, բացարձակ նախաձեռնողականություն չի ցուցաբերում, արդարանալով, որ ՀՀ սահմանադրությունն իրեն այլ լիազորություն չի տվել, հետևաբար հլու-հնազանդ ենթարկվում է ՀՀ գործադիր իշխանությանն ու նրա ղեկավարին:

Հանրապետության գլխին կանգնած է անսահմանափակ լիազորություններով օժտված մի անձ, որի աղեկավարության հարցն իր հերթին մտահոգության տեղիք է տալիս և դարձել է առաջնային նշանակություն մեր պետության մտածող զանգվածի համար: Մեր կարծիքով, այս անձի կործանարար գործունեությանը կօգնեն ՀՀԾ-ի աշխարհայացքային և կադրային քաղաքականությունը և մեր բնակչության այն շերտը, որն անձնապես աստելով ՀՀ երկրորդ և երրորդ նախագահներին և վերջինիս տոտալիտար համակարգը՝

կուրորեն կհավատա և հավատում է նրա «առաքելությանը» և կստանանի և ստանանում է նրա պաշտպանությունը:

Բայց եկեք, համաձայնենք, որ չարը պետք է պատժվի ի սկզբանե, ինչը տեղի չունեցավ Հայաստանի նորագույն պատմության 30 տարիների ընթացքում, որնէ առաջնորդի կողմից: Իսկ այսօրվա նոր իշխանություններն այդ սխալն ուղղում են յուրովի, հայեցողական, անձնական վրեժխնդությամբ կամ այլ ստոր դրդումներով, ինչն անընդունելի է ու դատապարտելի իրավական և ժողովրդավարական համարվող պետությունում, որն ունի նաև բազում սոցիալական-տնտեսական հիմնախնդիրներ, որոնք դեռ սպասում են իրենց լուծմանը:

Լևոն Ներսիսյան

Մերի Խաչատրյան

Ռուզաննա Ավագյան

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

13/12/2019թ.